




ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՇԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԹԻԻ ԺԲ. — ՇՐՋԱՆ Թ.

1876

ՏԱՐԻ Թ. — ԳԵԿՏԵՄԲԵՐ 54

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Արարատ ամսագրոյս թիւ չորջանը ներկայ թուով լրանալով՝ ժ-րդ չորջանը պիտի ողջունէ յառաջակայ 1877 թուականի Յունվար ամիսէն սկսեալ:

Ամսագրոյս պարունակութեանց ծրագիր, թերթից քանակութիւնք և բաժանորդագիրներ միեւնոյն պիտի մնան:

Ոյք որ կցանկան Արարատայ ժ-րդ չորջանին բաժանորդագրուիլ՝ պարտին սորա գործակալաց միոյն միջոցաւ կամ ուղղակի յանուն խմբագրութեան ամսագրոյս՝ անշուշտ մինչ ց15 Փետրվարի յառաջեկայ տարւոյ՝ հասուցանել իւրեանց ճիշտ և կանոնաւոր հարկերը:

Այս առթիւ Արարատայ խմբագրութիւն կիւլութայ խորին շնորհակալութիւն յայտնել թէ Ամսագրոյս գործակալաց՝ որք ձրիաբար և արդիւնաւոր կերպով կատարեցին իւրեանց պաշտօնը, և թէ համայն բարեսէր բաժանորդաց՝ որք ընկերագրութեամբ և ընթերցասիրութեամբ պատուեցին Արարատ ամսագիրը, և կյուսամբ որ նոյնպէս կհաճին շարունակել յառաջակայ չորջանում: